Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## Բագուայ հայոց կուլտուրական Միութեան

# УСТАВЪ

## БАКИНСКАГО АРМЯНСКАГО КУЛЬТУРНАГО СОЮЗА

062
Բ-40

БАКУ
ТИПОГРАФІЯ „БАКИНСК. ИЗДАТ. Т-ВА".
1906.

06 JUN 2008
01 MAR 2013

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## Բագուայ հայոց կուլտուրական Միութեան

# УСТАВЪ

## БАКИНСКАГО АРМЯНСКАГО КУЛЬТУРНАГО СОЮЗА

БАКУ
ТИПОГРАФІЯ „БАКИНСК. ИЗДАТ. Т-ВА".
1906.

14484

01 MAR 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

(Գ5213-61)

30970-61

Իսկականի վերայ գրուած է՝

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ» Բագու յունիսի 23-ին 1906 թ.

ժամանակաւոր գեն. նահանգապետ գեներալ լէյտենանտ Ֆադէեվ

# Բագուայ հայոց կուլտուրական միութեան կանոնադրութիւնը

## ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

§ 1) Բագուայ նահանգի հայ ժողովրդի կուլտուրական և տնտեսական յառաջադիմութեան զարկ տալու դիտաւորութեամբ, բացառապէս խաղաղ և օրինական միջոցներով, հիմնւում է սոյն ընկերութիւնը, որ կոչւում է «Բագուայ հայոց կուլտուրական միութիւն»:

Նկատ. 1) Միութեան գործունէութեան ասպարէզը գլխաւորապէս բագուի նահանգն է. բայց եթէ հնարաւորութիւն եղաւ Միութիւնը իրաւունք ունի գործելու նաև Անդրկովկասի հարևան նահանգներում:

Նկատ. 2) Միութեան կենտրոնը համարւում է Բագուն:

Նկատ. 3) «Տնտեսական և կուլտուրական յառաջադիմութեան» գաղափարի տակ պէտք է հասկանալ՝

a) Բանալ սկզբնական, հանրակրթական և մասնագիտական դպրոցներ և կանոնաւորել արդէն գոյութիւն ունեցողները, բանալ մանկական պարտէզներ, հոգ տանել ձրի ընդհանուր գրագիտութիւն տարածելուն, կիրակնօրեայ դպրոցների, զրոյցների, դասախօսութիւնների, հանրամատչելի կուրսերի, շարժական դպրոցների և սոյնանման լուսաւորութեան նպաստող հիմնարկութիւնների համար։ Ընդարձակել և կանոնաւորել գրադարանական գործը քաղաքներում և գիւղերում. հիմնել մշտական և շարժական գրադարաններ և կուրսեր դաստիարակչուհիների, դայեակների և ծծմայրերի համար։

b) Ընդարձակել և կանոնաւորել ինքնուրոյն և թարգմանական հրատարակչական գործը։ Դասագրքեր հրատարակել։ Հիմնել լրագիրներ, ամսաթերթեր, որոնց միջոցով ընդհանրացնել Միութեան գաղափարը։

Հոգ տանել—հայ լեզուն անարատ պահպանել և ծաղկեցնել։ Կազմել և հրատարակել էնցիկլօպեդիական, ընդհանուր և մասնագիտական բառարաններ։

c) Ընդարձակել և կանոնաւորել հայ բեմական գործը. կազմակերպել դրամատիքական կուրսեր, մշտական թատրոնական խմբեր, ինքնուրոյն և թարգմանական թատրոնական երկերի



գրադարաններ. կառուցանել թատրոնական շէնքեր. Նպաստել սկսնակ երիտասարդ ուժերի կատարելագործութեանը։

d) Բարւոքել գիւղական հողային հարցերը (մելիորացիա). կալուածատէրերի և գիւղացիների հողային առևտրին օժանդակել։ Վերջիններիս արժան կրեդիտ բանալ։ Հիմնել օրինակելի ֆերմաներ, փորձնական դաշտային աշխատանքներ։ Միջնորդել գիւղացիների համար գիւղատնտեսական գործիքներ, կենդանիներ և հացահատիկներ առնել։ Նպաստել գիւղական մթերքները ծախելուն, ամայի դաշտերը ոռոգելուն, կազմակերպել զրոյցներ, դասախօսութիւններ և այլն։

e) Ուսումնասիրել հայկական գեղարուեստը, ժողովրդական երաժշտութիւնը, գիւցազներգութիւնը. հին ճարտարապետութիւնը և նրա բեկորները։ Կազմել և հրատարակել նախնի ճարտարապետութեան, աւանդութիւնների, առակների և ասացուածների ժողովածուներ։ Կազմակերպել ժողովրդական և եկեղեցական երգեցիկ խմբեր։ Նիւթապէս նպաստել հայ գրագէտներին, նկարիչներին, երաժիշտներին, դերասաններին և այլն։

f) Հոգ տանել ժողովրդի ֆիզիքական կրթութեան, հիմնելով մարմնամարզական ընկերութիւններ, ազատ հրդեհաշէջ խմբեր, առողջա-

պահիկ խաղեր. բժշկական օգնութիւն հասցնել ժողովրդին։ Հոգ տանել առողջապահութեան և ֆելդշերական կուրսերի համար։

ց) Հայկական ընթացիկ կեանքի յարուցած խնդիրներին յարակցել, մշակելով սկզբունքներ Միութեան մեծամասնութեան տեսակէտով։ Բնորոշել մեր դէպի հարևան ազգերը ունենալիք յարաբերութիւնը։ Ձեռնարկել ընտրողական ագիտացիայի, Բագուայ հայ ժողովրդի կողմից ներկայացուցիչներ ուղարկելու պետական և հասարակական հիմնարկութիւնները։

## ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ՆՈՑԱ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

§ 2) Միութեան անդամ կարող է լինել Միութեան նպատակներին համակրող ամեն մի չափահաս հայ առանց սեռի, դիրքի և քաղաքական համոզման խտրութեան։

§ 3) Միութեան անդամները լինում են պատուաւոր, իսկական և նախանձախնդիր։

§ 4) Միութեան պատուաւոր անդամ ընտրւում են նոքա, որոնք աչքի ընկնող ծառայութիւն են մատուցել հայ ազգին կամ Միութեանը։ Այդպիսիները ընտրւում են Միութեան ընդհանուր ժողովի (տ. ստորև) համաձայնութեամբ, Գլխաւոր խորհրդի առաջարկութեամբ։



§ 5) Իսկական անդամ կարող է լինել ամեն մի հայ, որ իր ցանկութիւնը կ'յայտնէ այն խմբակի բիւրօյին (տ. ստորև), որտեղ նա կամենում է գործել։ Ամեն մի իսկական անդամ պարտաւոր է 1) վճարել Միութեան իր եկամուտների 2%-ը և 2) ներգործական կերպով մասնակցել իր ընտրած խմբակի գործերին։

§ 6) Նախանձախնդիր անդամները նոյն եղանակով են մտնում Միութեան մէջ (տ. § 5) ինչպէս և իսկականները։ Նախանձախնդիր անդամները, վճարելով իրանց եկամուտների 2%-ը, վայելում են Միութեան գործավարութեան մէջ նոյն իրաւունքները, ինչ որ պատուաւոր և իսկական անդամները, ազատ մնալով ակտիւ գործունէութիւնից։

## ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

§ 7) Ամբողջ միութիւնը բաժանւում է խմբակների (համաձայն § 1, 3-րդ նկատ.)—դպրոցական, թատրոնական և այլն.

§ 8) Համաձայն §§ 5 և 6 ամեն մի խմբակի մէջ կան իսկական և նախանձախնդիր անդամներ։

§ 9) Ամեն մի խմբակ ունի իր բիւրօն, բաղկացած եօթը անդամներից, որոնք ընտրւում են Միութեան իսկական անդամներից 1 տարի ժամանակով խմբակի ընդհանուր նիստերում (տ. ստորև)։

§ 10) Խմբակի բիւրօն իր միջից ընտրում է նախագահ, գանձապահ և քարտուղար։

Նկատ. 1 Ըստ ցանկութեան խմբակի, այդ պաշտօնները կարող են լինել և վճարով

Նկատ. 2) Բացի այդ, բիւրօն ըստ իր հայեցողութեան կարող է հրաւիրել վճարով մասնաւոր անձանց խմբակի այս կամ այն կարիքներին ծառայելու։

§ 11) Խմբակի բիւրօն իր ներքին գործերը և պարապմունքները վարում է ըստ իր հայեցողութեան:

§ 12) Խմբակի բիւրօն ընդհանուր խմբակային ժողովներ է կայացնում կամ ըստ իր հայեցողութեան, կամ ըստ պահանջման իր իսկական անդամների ոչ պակաս $^{1}/_{5}$ մասից։

§ 13) Ամեն մի խմբակի ընդհանուր ժողովը բացում է նոյն խմբակի բիւրօի նախագահը, իսկոյն և եթ առաջարկելով ժողովականներին ընտրել իրենց միջից նախագահ և քարտուղար։

§ 14) Ամեն մի խմբակ կարող է ձեռք բերել շարժական և անշարժ կայք միմիայն Միութեան անունով.

§ 15) Ամեն մի խմբակ ունի իր գանձարանը և հաշուետուութիւնը։

§ 16) Բոլոր խմբակներինախագահները կազմում են Միութեան Գլխաւոր Խորհուրդը։

§ 17) Գլխաւոր Խորհուրդը ունի իր առանձին նախագահը, նրա օգնականը, գանձապահը և քարտուղարը, (§ 10-ի 1 և 3-րդ նկատող. վերաբերում է և սոցա)։



§ 18) Գլխաւոր Խորհրդի զբաղմունքներն են՝

a) Վարել ամբողջ Միութեան վարչական գործերը։

b) Մասնաւորապէս վարում է այն ուղղութեամբ գործերը, որոնք նշանակուած են կանոնադրութեան § 1, 3-րդ նկատ. և ց պարբերութ.

c) պահել գլխաւոր գանձարանը։

d) 'Ի դիմաց Միութեան ներկայանալ հիմնարկութիւններին և մասնաւոր անձանց։

e) Ձեռք է բերում Միութեան անունով անշարժ և շարժական կալուածքներ և առհասարակ՝

f) Ամբողջ Միութեան գործերի գլխաւոր վարիչը և կարգադրիչը հանդիսանալ։

§ 19) Գլխաւոր Խորհուրդը հրաւիրում է Միութեան ընդհանուր ժողովներ կամ ըստ իր հայեցողութեան կամ ըստ պահանջման Միութեան իսկական անդամների $^{1}/_{5}$ մասի։

§ 20) Միութեան ընդհանուր ժողովներում վճռում են միութեան վերաբերեալ ընդհանուր հարցեր։ Մասնաւորապէս ընդհանուր ժողովի պարապմունքներն են՝

a) Բաշխել խմբակների մէջ նուիրատուութիւնները։

b) Քննել և հաստատել Գլխաւոր Խորհրդի ներկայացրած առաջիկայ տարուայ նախահաշիւը և հաստատել անցած տարուայ հաշիւը։

c) Որոշումներ կայացնել կանոնադրութեան § 1 3-րդ. Նկատ. ց պարբերութ. համար։

d) Ընտրել պատուաւոր անդամներ։

e) Սոյն կանոնադրութեան փոփոխման խընդիրը։

f) Միութեան փակելու խնդիրը։

§) 21) Միութեան ընդհանուր ժողովների նիստը բացում է Գլխաւոր Խորհրդի նախագահը իսկոյն և եթ առաջարկելով ժողովին ընտրել իր միջից նախագահ և քարտուղար:

§ 22) Գլխաւոր Խորհրդի ամեն մի անդամը վճռական ձայնով իրաւունք ունի մասնակցել ամեն մի խմբակի ընդհանուր ժողովներին, իսկ նրա նախագահը բացի այդ կարող է մասնակցել վճռական ձայնով խմբակի բիւրոյի նիստերին։

§ 23) Ամեն մի խմբակի և ամբողջ Միութեան ընդհանուր ժողովները կարող են լինել հրապարակական կամ փակ. առաջին դէպքում, ըստ որոշման խմբակի բիւրոյի, իսկ երկրորդ դէպքում Գլխաւոր Խորհրդի։

§ 24) Խմբական բիւրօն պարտական է ընդհանուր հերթական ժողով գումարել ոչ պակաս քան ամիսը 1 անգամ, իսկ Գլխաւոր Խորհուրդը ոչ պակաս քան տարին 2 անգամ։



## ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒԵՏԵՍՈՒԹԻՒՆԸ

§ 25) Ամենայն տարի ոչ ուշ քան Մարտի 1-ը Միութեան Գլխաւոր Խորհուրդը կազմում է Միութեան գործունէութեան անցած տարուայ հաշիւը և յանձնում վերստուգող յանձնաժողովի քննութեանը։ Վերջինս երկու շաբաթուայ ընթացքում համեմատելով Միութեան գրքերի և վաւերաթղթերի հետ անում է իր նկատողութիւնները և վերադարձնում Գլխաւոր Խորհրդին, որը տպելով հաշիւը բաժանում է Միութեան անդամներին։ Այդ նախահաշիւը քննւում և հաստատւում է Միութեան մօտակայ ընդհանուր ժողովում։

## ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՅՔԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 26) Միութիւնը ներկայանում է որպէս մի իրաւաբանական մարմին և հետևաբար լիազօր է գնել և ծախել շարժական և անշարժ կալուածքներ, վարել և մասնակցել առևտրական ձեռնարկութեանց։

§ 27) Միութեան միջոցները կազմում են՝

a) Անդամավճարները: (տ. § 5)

b) Նուիրատուութիւնները:

Նկատ. 1) Նուիրատուութիւնները կարող են լինել կամ Միութեան անունով կամ յատկացրած որոշ խմբակների կարիքներին, համաձայն § 20 a պարբերութեան։

c) Երեկոյթների, նուագահանդէսների, ներկայացումների, զբօսանքների և վիճակախաղերի արդիւնքներից:

d) Միութեան առևտրական ձեռնարկութիւնների եկամուտից:

§ 28) Միութեան հիմնական դրամագլուխը (ֆոնդ) կազմւում է ամեն մի նոր անդամի միանուագ եռամսեայ անդամավճարից: Բացի այդ նորեկ անդամը գրուած օրից պարտաւոր է մուծնել իր սովորական անդամավճարը:

§ 29) Գլխաւոր Խորհուրդը, համեմատ իր եկամուտների աւելացման մշակում է ընդհանուր Միութեան բանկի կանոնադրութիւնը (ստատուտ) որի բացման ժամանակը որոշում է Միութեան ընդհանուր ժողովը: Այդ բանկում կ'պահուեն Միութեան բոլոր դրամագլուխները:

§ 30) Անդամներից նոքա, որոնք շարունակ երեք ամսուայ ընթացքում չեն մուծել իրանց վճարը զրկւում են անդամակցութիւնից:

## ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ

§ 31) Միութեան կանոնադրութեան այս կամ այն կէտի փոփոխումը կարող է կատարուել միմիայն Միութեան ընդհանուր ժողովում ձայների մեծամասնութեան որոշմամբ:

Կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկելու առաջարկը ընդհանուր ժողովին անում է Միութեան Գլխաւոր Խորհուրդը կամ ըստ իր բարեհայեցողութեան կամ Միութեան ոչ պակաս քան յիսուն անդամների առաջարկութեամբ, փոփոխուած յօդուածը ոյժ է ստանում միմիայն այն ժամանակ, երբ որ նա կը հաստատուի իշխանութիւնից:



## ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

(Լ ի կ ւ ի դ ա ց ի ա)

§ 32) Միութիւնը փակւում է ընդհանուր ժողովի 3|4 մասի պահանջմամբ, իսկ նրա շարժական և անշարժ կայքը և դրամագլուխները յատկացնւում են այն հիմնարկութեան, որը ցոյց կ'տայ նոյն ընդհանուր ժողովը և որը կը ճանաչուի իշխանութիւնից օրինական:

На подлинномъ написано
„УТВЕРЖДАЮ“. Іюня 23 дня 1906 года,
гор. Баку.
Временный ген. губернаторъ, генералъ лейтенантъ
Ѳадѣевъ

# УСТАВЪ
# БАКИНСКАГО АРМЯНСКАГО КУЛЬТУРНАГО СОЮЗА.

## ЦѢЛЬ СОЮЗА.

§ 1) Для поднятія культурнаго и экономи, ческаго развитія армянъ бакинской губерніи исключительно мирными и легальными средствами учреждается настоящій Союзъ, называемый „Бакинскимъ армянскимъ культурнымъ Союзомъ“.

*Примѣчаніе 1-ое.* Районъ дѣятельности Союза главнымъ образомъ —бакинская губернія, но Союзу въ случаѣ возможности предоставляется право оперировать и въ сосѣднихъ губерніяхъ Закавказья.

*Примѣчаніе 2-ое.* Мѣстопребываніе Союза считается гор. Баку.

*Примѣчаніе 3-ье.* Подъ понятіемъ „экономическое и культурное развитіе“ разумѣется:



a) Открытіе и упорядоченіе существующихъ школъ начальныхъ, обще-образовательныхъ и профессіональныхъ. Открытіе дѣтскихъ садовъ. Забота о даровомъ всеобщемъ обученіи, воскресныхъ школахъ, чтеніяхъ, лекціяхъ, популярныхъ курсахъ, летучихъ школахъ и т. п. просвѣтительныхъ учрежденіяхъ. Расширеніе и упорядоченіе библіотечнаго дѣла въ городахъ и селахъ. Учрежденіе библіотекъ постоянныхъ и летучихъ. Курсы для воспитательницъ, нянекъ и боннъ.

b) Расширеніе и упорядоченіе издательскаго дѣла какъ оригинальнаго, такъ и переводнаго. Изданіе учебниковъ. Газетное и журнальное дѣло, проводящее путемъ печати идеи Союза.

Забота о сохраненіи и развитіи армянскаго языка. Составленіе и изданіе толковыхъ словарей общихъ и по разнымъ отраслямъ знанія. Энциклоп. словари.

c) Расширеніе и упорядоченіе армянскаго театральнаго дѣла. Драматическіе курсы. Созданіе постоянныхъ труппъ. Театральная литература, оригинальная и переводная. Созданіе помѣщеній для театра. Театральныя библіотеки. Стипендіи молодымъ артистамъ.

d) Мелioративное крестьянское дѣло въ самомъ широкомъ смыслѣ этого слова.

Посредничество между помѣщиками и крестьянами по вопросу о куплѣ и продажѣ земли, снабженіе крестьянъ дешевымъ кредитомъ, устройство образцовыхъ фермъ, опытныхъ полей, посредничество по пріобрѣтенію крестьянами орудій, сѣмянъ, скота, продажа крестьянскихъ товаровъ, устройство орошенія полей, чтенія и курсы въ деревняхъ и т. п.

e) Армянское искусство и эпосъ. Древняя архитектура. Памятники ея. Народная музыка. Изданіе альбомовъ древней архитектуры Собраніе и изданіе народныхъ пѣсенъ. Былины, сказанія и легенды; собираніе и изданіе ихъ. Созданіе пѣвческихъ капеллъ и хоровъ церковныхъ. Поддержаніе тружениковъ армянской культуры: литераторовъ, художниковъ, артистовъ, музыкантовъ и т. д.

f) Забота о физическомъ развитии армянскаго народа: гимнастическія общества, вольныя пожарныя дружины, разные виды здороваго спорта, медицинская помощь народу. Санитарія. Фельдшерскія школы.

g) Реагированіе на тѣ или другіе запросы, предъявляемые теченіемъ армянской народной жизни и выработка методовъ этого реагированія съ точки зрѣнія, устанавливаемой болшинствомъ членовъ Союза. Установленіе характера отношеній къ ближайшимъ сосѣдямъ армянъ. Выборная агитація



при выборахъ отъ бакинскаго армянскаго населенія въ тѣ или другія общественныя или государственныя учрежденія

**Члены союза, ихъ права и обязанности.**

§ 2) Членомъ Саюза можетъ быть каждый совершеннолѣтній армянинъ, сочувствующій цѣлямъ Союза, какого бы пола и общественнаго положенія онъ ни былъ и какихъ бы политическихъ убѣжденій онъ ни держался.

§ 3) Члены Союза дѣлятся на почетныхъ, дѣйствительныхъ и соревнователей.

§ 4) Въ почетные члены Союза избираются лица, оказавшія какія либо особенныя услуги армянскому народу или Союзу. Почетные члены избираются общимъ собраніемъ Союза [см. ниже] по представленію, сдѣланному Главнымъ Бюро Союза.

§ 5) Въ дѣйствительные члены Союза можетъ записаться каждый армянинъ, который заявитъ о таковомъ своемъ желаніи бюро той группы Союза [см. ниже], къ каковой онъ пожелаетъ приписаться. На обязанности дѣйствительнаго члена Союза лежатъ: во 1) платить въ союзъ 2% со своихъ доходовъ и во 2) принимать активное участіе въ работахъ той группы, къ каковой онъ желаетъ приписаться.

§ 6) Порядокъ вступленія члена сорев-

нователя такой же, какъ и дѣйствительнаго члена [см. § 5]. Пользуясь правомъ такого же рѣшающаго голоса при рѣшеніи союзныхъ дѣлъ, каковой принадлежитъ членамъ почетнымъ и дѣйствительнымъ, членъ соревнователь обязанъ дѣлать лишь свои 2 процентные взносы, не будучи обязанъ участвовать въ Союзѣ личнымъ трудомъ.

## Организація Союза.

§ 7) Весь Союзъ дѣлится на группы. Согласно примѣчанію 3-му § 1-го есть группы школьныя, театральныя, меліоративныя и т. д.

§ 8) Какъ видно изъ §§ 5 и 6 въ каждой группѣ есть свои дѣйствительные члены и соревнователи

§ 9) У каждой группы есть свое выборное бюро въ составѣ семи членовъ, выбираемыхъ на групповыхъ общихъ собраніяхъ [см. ниже] срокомъ на одинъ годъ изъ числа дѣйствительныхъ членовъ группы.

§ 10) Групповое бюро избираетъ изъ своей среды предсѣдателя группы, его товарища, казначея и секретаря.

*Примѣчаніе 1-ое.* Должности эти могутъ быть и платныя, если того пожелаетъ группа.

*Премѣчаніе 2 ое.* Помимо этого, бюро по своему усмотрѣнію приглашаетъ и разныхъ



платныхъ лицъ по найму для обслуживанія тѣхъ или другихъ нуждъ группы.

§ 11) Внутренній распорядокъ занятій и дѣятельности группы устанавливаетъ бюро ея по своему усмотрѣнію, не входя однако въ разрѣзъ съ уставомъ Союза.

§ 12) Бюро группы собираетъ общія собранія группы, или по своему усмотрѣнію, или по требованію, поданному не менѣе, какъ 1/5 части дѣйствительныхъ членовъ группы.

§ 13) Общія собранія группы открываются предсѣдателемъ бюро данной группы, при чемъ тотчасъ же послѣ открытія общаго собранія, группа выбираетъ изъ числа собравшихся предсѣдателя и секретаря общаго собранія, изъ коихъ первый предсѣдательствуетъ на собраніи, а второй записываетъ протоколъ его.

§ 14) Каждая группа можетъ обладать своимъ движимымъ и недвижимымъ имуществомъ, пріобрѣтеннымъ однако на имя всего Союза.

§ 15) Каждая группа имѣетъ свою собственную кассу и свое собственное счетоводство.

§ 16) Собраніе предсѣдателей бюро всѣхъ группъ образуетъ Главное Бюро Союза.

§ 17) Главное Бюро Союза имѣетъ своего предсѣдателя Главнаго Бюро, товарища его, секретаря и казначея.. Въ отношеніи

къ нимъ примѣняется также примѣчаніе 1-ое и 3-ье къ § 10-му.

§ 18) Главное Бюро Союза имѣетъ предметовъ своихъ занятій слѣдующее:

a) Оно ведетъ всѣ административныя дѣла своего Союза,

b) Спеціально завѣдуетъ тою отраслью работы Союза, которая отмѣчена подъ лит. g примѣчанія 3-го § 1-го настоящаго устава

c) Ведетъ главную кассу Союза.

d) Представительствуетъ за Союзъ передъ внѣшними лицами и учрежденіями.

e) Пріобрѣтаетъ на имя Союза потребную ему движимость и недвижимость и вообще:

f) Является главнымъ исполнительнымъ и распорядительнымъ органомъ всего Союза.

§ 19) Главное Бюро Союза собираетъ обще-союзныя общія собранія Союза или по своему усмотрѣнію или по требованію, поданному не менѣе, какъ 1|5 частью всѣхъ дѣйствительныхъ членовъ всего Союза.

§ 20) На общихъ собраніяхъ Союза рѣшаются обще-союзныя дѣла. Въ частности вѣдѣнію общихъ собраній Союза подлежитъ:

a) Распредѣленіе пожертвованій дѣлаемыхъ на имя Союза между разными его группами.

b) Разсмотрѣніе и утвержденіе смѣты, представляемой на будущій годъ Главнымъ Бюро и утвержденіе отчета за истекшій годъ.



c) Порѣшеніе вопросовъ, помѣченныхъ литерой g, прим. 3 § 1 устава.

d) Выборъ почетныхъ членовъ.

e) Измѣненіе настоящаго устава.

f) Вопросъ о ликвидаціи Союза.

§ 21) Общія собранія Союза открываются предсѣдателемъ Главнаго Бюро Союза, при чемъ тотчасъ же послѣ открытія, члены его избираютъ изъ среды своей предсѣдателя общаго собранія и секретаря, изъ коихъ первый предсѣдательствуетъ на собраніи, а второй записываетъ протоколъ его.

§ 22) Каждый членъ главнаго Бюро имѣетъ право участвовать съ правомъ рѣшающаго голоса въ засѣданіяхъ любой группы, а предсѣдатель Главнаго Бюро имѣетъ право помимо этого принимать участіе также съ правомъ рѣшающаго голоса въ засѣданіяхъ бюро каждой группы.

§ 23) Какъ засѣданія членовъ данной группы, такъ и засѣданія всего Союза могутъ быть открытыми или закрытыми. Рѣшеніе этого вопроса въ первомъ случаѣ подлежитъ компетенціи группового бюро, а во второмъ —Главнаго Бюро Союза.

§ 24) Групповое бюро обязано собирать очередныя общія собранія группы не рѣже, какъ одинъ разъ въ мѣсяцъ, а Главное Бюро Союза обязано собирать очередныя обще-

союзныя засѣданія не поже, какъ 2 раза въ годъ.

## Отчетность Союза

§ 25) Ежегодно, не позже 1-го марта, Главное Бюро Союза составляетъ отчетъ дѣятельности Союза за истекшій годъ и передаетъ его на разсмотрѣніе Ревизіонной Комиссіи. Послѣдняя въ теченіе двухъ недѣль, свѣрившись съ книгами и вообще документами Союза, снабжаетъ этотъ отчетъ своими замѣчаніями и возвращаетъ отчетъ Главному Бюро, которое печатаетъ его и разсылаетъ членамъ Союза. Отчетъ этотъ затѣмъ разсматривается и утверждается ближайшимъ общимъ собраніемъ Союза.

Общее собраніе Союза избираетъ изъ своего состава Ревизіонную Комиссію въ составѣ семи человѣкъ, которая и обязана провѣрять отчеты Главнаго Бюро и снабжать ихъ своими замѣчаніями.

## Имущества и средства союза.

§ 26) Союзъ является юридическимъ лицомъ и, какъ таковое, имѣетъ право покупать и продавать движимыя и недвижимыя имущества вести предпріятія, участвовать въ оныхъ.

§ 27) Средства Союза состоятъ изъ:

a) Членскихъ взносовъ [см. § 5].



b) Изъ пожертвованій.

*Примѣчаніе.* Пожертвованія могутъ дѣлаться или всему вообще Союзу и тогда они распредѣляются порядкомъ, указаннымъ въ § 20 пунктѣ а Устава, или спеціально для нуждъ данной группы.

c) Изъ доходовъ съ вечеровъ, баловъ, концертовъ, спектаклей, гуляній, лоттарей, сборовъ и кружекъ.

Изъ доходовъ отъ предпріятій Союза.

§ 22) Основной фондъ Союза образуется изъ единовременныхъ трехмѣсячныхъ членскихъ вступительныхъ взносовъ, которые дѣлаетъ каждый вновь вступающій въ Союзъ членъ. Взносъ этотъ не исключаетъ обязательства, возлагаемаго на каждаго члена вносить свои ежемѣсячные взносы, начиная съ перваго же мѣсяца его вступленія въ Союзъ.

§ 29) Главное Бюро Союза по мѣрѣ накопленія средствъ у Союза разрабатываетъ статутъ общесоюзнаго банка, каковой открывается въ срокъ, имѣющій быть указаннымъ общимъ собраніемъ Союза. Банкъ этотъ явится главнымъ хранилищемъ средствъ Союза.

§ 30) Членъ Союза, не внесшій въ теченіи трехъ мѣсяцевъ подъ рядъ своихъ членскихъ взнссовъ, считается выбывшимъ изъ Союза и вычеркивается изъ списковъ его.

835



## Измѣненіе устава союза.

§31) Измѣненіе того или другого параграфа настоящаго устава можетъ быть произведено лишь на общемъ собраніи Союза по постановленію большинства членовъ общаго собранія Предложеніе измѣнить тотъ или другой параграфъ устава вносится въ общее собраніе Главнымъ Бюро Союза или по своему усмотрѣнію, или по заявленію, поданному не менѣе, какъ пятьюдесятью членами Союза. Измѣненный параграфъ входитъ въ силу лишь по утвержденіи его соотвѣтствующими властями.

## Ликвидація союза.

§ 32) Въ случаѣ пожеланія, выраженнаго тремя четвертями членовъ общаго собранія Союза, на разсмотрѣніе котораго будетъ поставленъ вопросъ о ликвидаціи Союза, Союзъ ликвидируетъ свои дѣла, а имущество его и капиталы передаются въ то учрежденіе, которое указано будетъ въ данномъ общемъ собраніи, причемъ учрежденіе это должно быть признаваемо закономъ.

Гос. Библиотека
ZUUՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0142597

14488